

« Պատմենք մեր պատմութիւնները՝ Ներգաղթող կիներու դիմադրականութիւնը »

*Ներգաղթող կիներու կողմէ, ներգաղթող կիներուն աջակցելու
համար գրուած իւրայատուկ նկարագարի վէպ*



Նկարագարդ վէպին մասին

Պատմենք մեր պատմութիւնները՝ Ներգաղթող կիներու դիմադրականութիւնը ձեռնարկը OCASI-ի սեռային սաստկութեան ու ոտնձգութեան դեմ պայքարի ծրագրին մէկ մասն է, որուն ծախսը կը հոգայ Օնթարիոյի Քաղաքացիութեան ու Ներգաղթի Նախարարութիւնը (MCI: Ministry of Citizenship and Immigration):

Թէ քաղաքացիները եւ թէ ծառայութիւն մատուցողները սեռային սաստկութեան մասին տեղեկացնել ու վարժեցնելը ձեռնարկին անբաժանելի մասն է: Պատմենք մեր պատմութիւնները՝ Ներգաղթող կիներու դիմադրականութիւնը ձեռնարկը ձեւաւորուեցաւ ստեղծագործական գրականութեան արհեստանոցներու շարքի մը ընթացքին, ուր ներգաղթող կիներ միասին եկան իրարմէ սորվելու ու փորձառութիւնները կիսելու, ու շարադրեցին ներկայ վէպի մաս կազմող պատմութիւնները: Նկարագարդ վէպի մասին լրացուցիչ տեղեկութիւններու, կամ յաւելեալ օրինակներ ապսպրելու համար կապուեցէ՛ք մեզի հետ էլ-փոսթով՝ vaw@ocasi.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 3 Բարի գալուստի պատգամ
- 4 Երախտիքի խօսք
- 5 Քոսէի պատմութիւնը
- 15 Մակալիի պատմութիւնը
- 24 Ամալի պատմութիւնը
- 32 Մանուէլայի պատմութիւնը
- 40 Քննարկում ու հարցումներ
- 42 Մտորումներ



Բարի գալուստի պատգամ

Երեք Գանատացի կիներէ մէկը իր կեանքի ընթացքին կ'ենթարկուի սեռային սաստկութեան: Սեռային սաստկութենէ տուժողներու մեծամասնութիւնը ոչ ոքի չեն խօսիր իրենց վրայ կատարուած հարցակումի մասին ոչ ոստիկանութեան, ոչ ընկերներու, ոչ ալ ընտանիքի անդամներուն: Այս լուծեան պատճառները մէկ կողմէն խայտառակուելու, աշակցութեան բացակայութիւնն ու դէպքի մասին յանցաւոր նկատուելու մասին վախը, ու միւս կողմէն ալ սեռային սաստկութեան ու աշակցութեան հասանելիութեան մասին տեղեկութիւններու անբաւարարութիւնն են: Սեռային սաստկութեան հետ պայգարի հարցին շուրջ կիներու առջեւ կան մի քանի խոչընդոտներ՝ Ձեռային, ազգային ու կրօնական խտրականութիւնն ու նախապաշարումներ, նաեւ համօֆօպիա, պիֆօպիա եւ թրասնֆօպիա: Գանատա նոր ժամանած կիներ յատկապէս խոցելի վիճակի մէջ են իրենց ներգաղթի կարգավիճակին ու այս երկրի պայմաններուն լիովին ծանօթ չըլլալու պատճառով:

Ստեղծեցինք « Պատմենք մեր պատմութիւնները՝ Ներգաղթող կիներու դիմադրականութիւնը » նկարագարող վէպը, յատկապէս այս երկիրը նոր ժամանած կիներու փորձառութեան որոշ մէկ մասին վրայ արտայայտուելու համար՝ սաստկութեան դէպքերու պարագային համայնքին ցուցաբերելիք աշակցութեան ու ներգրւուման վերաբերեալ: Կը յուսանք որ այս պատմութիւնները մեր երկրի գանազան մշակութային գաղութները մղեն կիներու հանդէպ սաստկութեան դէմ պայգարի մասին քննարկումներու ու երկխօսութիւններու, ու գործնական քայլեր առնելու՝ ներառեալ իրենց կեանքէն ներս: Ընկերային աշխատակողմները կարեւոր դեր ունին խաղալու՝ սեռային սաստկութեան մասին երկխօսութիւններու ուղղութիւն տալու մէջ: Կը յուսանք որ այս հրատարակութիւնը Ձեզ եւ ուրիշներուն աշակցի կիներու հանդէպ սաստկութեան հարցի շուրջ կատարուելիք խիստ կարեւոր գործին ընթացքին:

Տեպի Դակլաս (Debbie Douglas), OCASI-ի Գործադիր տնօրինուհի

Ֆայզա Ապտալաուի (Fayza Abdallaoui), MOFIF-ի նախագահուհի

OCASI-ի մասին

OCASI-ն հիմնուեցաւ 1978-ին, իբրեւ միացեալ ձայնը՝ ներգաղթողներուն ծառայութիւններ մատուցող գործակալութիւններու, կարիքներու ու մտահոգութիւններու հանդէպ լուծումները ներդաշնակեցնելու նպատակով:

OCASI-ն արձանագրուած է որպէս մարդասիրական կազմակերպութիւն, որուն կը կառուարէ իր կամաւոր տնօրէններու խորհուրդը: Անդամներն են Օնթարիո նահանգի մէջ գործող 200-է աւելի համայնքային կազմակերպութիւններ:

OCASI-ի առաքելութիւնն է ներգաղթողներու ու փախստականներու համար ապահովել Գանատական կեանքի բոլոր ոլորտներէն ներս հաւասարութիւն, հասանելիութիւն ու անկաշկանդ մասնակցութիւն:

MOFIF-ի մասին

MOFIF-ը, Օնթարիոյի ֆրանսախօս ներգաղթող կիներու շարժումն է, որ հիմնուեցաւ օթթաուլի մէջ 2003 տարին, իբրեւ նահանգային շահույթ չհետապնդող կազմակերպութիւն: Իր առաքելութիւնն է ներգրւուման, շահերու պաշտպանութեան եւ հանրային կրթութեան միջոցներով Օնթարիոյի ֆրանսախօս կիներու կեանքը բարելաւելու ուղղեալ հետազոտութիւններ ու ձեռնարկներ իրականացնել:

MOFIF-ը կիներու ծառայութիւններ մատակարարող գանազան կազմակերպութիւններու համար կը զարգացնէ գործիքներ, դասընթացքներ ու քարոզչական արշաւներ:



Շնորհակալիք

OCASI-ն կ'ուզէ իր անկեղծ գնահատանքը յայտնել ստեղծագործական գրականութեան արհեստանոցի մասնակիցներուն, նաեւ խորհրդատու յանձնաժողովի ներկայացուցիչներուն ու անդամներուն նկարագարող վէպի պատրաստութեան աշխատանքներուն իրենց բերած ներդրումին համար:

Առանց Թորոնթօյի, Օթթաուայի ու Ուինտսորի ստեղծագործական գրականութեան արհեստանոցներու տաղանդաւոր մասնակիցներուն, մեր նկարագարող վէպը գոյութիւն պիտի չունենար. բոլորին սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք: Իրենց շարքերուն մաս կը կազմեն **Alona Soschen, Annie-Olivia, Awa Ndiaye, Awa Dao, Blanca, Edith Igwe, Ghina, Helena Nynaoh, Hyam Dabbagh, Jia Li (Carrie) Hou, Jordanka Kanova, Maham Gull, Mariah, Mais, Marie-Francisca Ntabala, Mehroz Ahmed, Michelle Tomlinson, Mona Barkat, Nathalie Nadon, Necah, Nicole Williams, Pierette, Rebecca Miller, Safira Abu Di, Sala Al-Anisi, Sarah Al-Anisi, Shi Jia Hong, Stella, Xiu Lin.**

Մեր խորհրդատու յանձնաժողովի անդամ կազմակերպութիւններ՝

- **Access Alliance Multicultural Health and Community Services**
- **Action ontarienne contre la violence faite aux femmes**
- **Argana, Association des femmes maroco-canadiennes**
- **Association des juristes d'expression française de l'Ontario**
- **CALACS francophone d'Ottawa**
- **Centre francophone de Toronto, service juridique**
- **Centre de santé communautaire Hamilton/Niagara**
- **TAIBU Community Health Centre**
- **Collège Boréal**
- **Conseil Scolaire Viamonde**
- **Immigrant Women Services Ottawa**
- **Julie Lasonde, avocate et artiste**
- **Oasis Centre des femmes**
- **Ontario Coalition of Rape Crisis Centres**
- **Rexdale Women's Centre**
- **Springtide Resources**
- **The Redwood**
- **University of Toronto, Factor-Inwentash Faculty of Social Work**
- **Windsor Women Working with Immigrant Women**
- **Women's Health in Women's Hands Community Health Centre**

Կ'ուզենք նաեւ շնորհակալութիւն յայտնել ստեղծագործական գրականութեան արհեստանոցները հիւրընկալող Newcomer Women's Services, Windsor Women Working with Immigrant Women, Immigrant Women Services Ottawa ու Mouvement Ontarien des Femmes Immigrantes Francophones (MOFIF)-ին:

Ծրագրի ղեկավարներ՝ **Krittika Ghosh & Siham Chakrouni**

Համակարգող՝ **MOFIF : Djia Mambu**

Նկարագարողում ու տիպայն **Coco Guzman**

ՕՈԹԹԱՈՒԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Բարեւ Մերի: Չի մոռնա՛ս վաղը կասավայի տերեւներ բերել:

Անշու՛շտ Քոսէ: Աղջի՛կ, ինչպե՛ս ես:

Ըստ սովորականի, մօրս հաշարանը կ'աշխատիմ:



Ա՛խ Քոսէ, օր մը քու զաւակները քեզ համար կ'աշխատին:

Նախ ինձի ամուսին մը գտի՛ր:



Քոսէն հաշարանին մէջ



Բա Քոսէ, դուն իմ կեանքիս սերն ես:

Այո, մամա:



Մայրը Այդ քու մեքենան միշտ կը հչայ:

Ատիկայ համակարգիչ է, մամա:

Մայրը Գիտեմ, այդքան ալ ծեր չեմ:



Մայրը ճաշարանին կայքէջը ե՛րբ պիտի ամբողջանայ:

Եթէ ձգես որ աշխատիմ, շուտով կ'ըլլայ:



Հմմ, տեսնենք թէ ո՞վ է գրեր այդ պատգամը:

Սիրելի Քոսէ, դուն ինձ չես հանչնար, բայց ես համացանցի վրայ գրածներդ միշտ կը կարդամ, ու ուզեցի ինքզինքս քեզ ներկայացնել:



Ո՛ւ ուու ... բարեւ երիտասարդ:



Ուրիշ օր մը...

Քոսէ, կայքէջէն նոր լուր մը կա՞յ:

Սիրելի Քոսէ, օրդ ինչպէ՞ս անցաւ:

Բարեւ եթերային Գ: Բաւական գրադած էի:

Չափազանց շատ կ'աշխատիս:

Գրեթէ վերջացաւ:



Ու տարբեր օր մը ...

Քոսէ!

Բարեւ Քոսէ, Գանատայի մէջ կը ձիւնէ:

Շատ կուզէի ձիւնը տեսնել:

Սքայք-ով խօսինք ու քեզ կը ցցնենմ:

Տակաւին վրան կ'աշխատիմ, Մամա:




Ու տարբեր օր մը ...

Անհաւատալի՞ բան – ամէն տեղ հերմակ դարձած է:

Շատ կը սիրեմ ձիւնին վրայ քալել:

Չե՞ս սառիր:



Ու տակաւին տարբեր օր մը..

Մեր ճաշարանը քաղաքի ամէնալաւերէն է:

Յուսամ օր մը ձեր ճաշերը համտեսելու առիթը կ'ունենամ:

Սքանչելի կըլլայ:



Փորձեմ յաջորդ արձակուրդիս գալ:

Շա՛տ ուրախ կ'ըլլամ:



Հիմայ կը սկսիմ թոռք մը բնտոել:



Յուսախամ փ եմ Քոսէ: Շաբաթներէ ի վեր կայքէջիս կը սպասեմ:

Սիրելի Քոսէ, թոռքս կարգադրեցի. երեք շաբաթէն ետն կ'ըլլամ:

Կը ներես, մամա:



Չափազանց ջղային եմ. ի՞նչ պիտի ընեմ եթէ ինծի չի հաւնի ...

Ահա հասա: Աղջիկ մը կը տեսնեմ: Այս գործը շատ դիւրին պիտի ըլլայ:



Բարեւ Քոսէ, չեմ կրնար հաւատալ որ վերջապես կը հանդիպինք:

Հրապուրի՞չ տղայ է ...



Մի քանի գնումի համար շուկայ կ'երթամ. կ'ուզե՞ս հետս գալ:

Ո՛ր որ երթաս, հետդ կու գամ, Քոսէ:



Այս շուկան շատ կը սիրեմ: Փոքրութենէս ի վեր այտեղ կո գամ ու բոլորին կը հանչնամ:

Քոսէ, կը տեսնեմ որ առանց իմ օգնութեան ներկայանալի երիտասարդ մը գտած ես:

Գեղեցիկ շուկայ է:



Պարզապէս այստեղ քեզի հետ ըլլալ ... Քոսէ, բոլոր կեանքիս մէջ հանդիպած ամենագեղեցիկ կինն ես:

Վստահ ե՞ս որ հետս չես գուարճանար:



Մէրը խաղալիք բան չէ: Սրտանց կը խօսիմ: Լուր ունի՞ս թէ սիրտս ինչ կ'ըսէ:

Ո՞րոտոջ:



Սիրտս կ'ըսէ թէ քու մէջ կը տեսնէ իմ հոգու ընկերը: Դուն ալ նոյն բանը կը զգա՞ս:

Այո՞ ... ճի՛շդ նոյնպէս:

Տօնական շրջանը միասին անցնելով աւելի լաւ զիրար հանչցանք: Ծնողքիս հետ ալ ծանօթացաւ: Մանկութեանս տունը իրեն ցցուցի: Իմ ընկերներու հետ ժամանակ անցուցինք: Ամուսնութիւն առաջարկեց ու ես ալ ընդունեցի: Ըսի իրեն որ կ'ուզեմ երեք զաւաթ ունենալ ու բանալ համբաւաւոր հաշարան մը: Ըսաւ որ միասին աշխատելով կրնանք մեր երազները իրականացնել: Խօսուացաւ որ իմ մշտական բնակչութեան դիմումս կ'երաշխաւորէ: Տօնական շրջանին վերջաւորութեան Գանատա ետ գնաց: Յաջորդ արձակուրդին կրկին եկաւ. ամուսնացանք ու միասին Գանատա մեկնեցանք:





Մի քանի ամիս վերջ...

Կինը կը լսես թէ ի՞նչ կ'ըսէ սիրտս:



... թէ դուն իմ հոգու՛ ընկերն ես:



Քեզ տեսայ ուրիշ աղջկայ մը հետ: Խնդրե՛մ, մտածե՛ մի քիչ իմ մասին ... թէ որքա՛ն ցաւ կը պատճարես ինձի:

Քու ինչ խորհիլդ իմ հո՛գս անգամ չէ: Ինձմէ կախեալ ես, ու կրնամ քեզ երկրէն դուրս նետել տալ:



Հաշուարարը կը ցաւիմ, տիկին, ձեր քարտը կը մերժուի:

Ի՞նչ կըսես:



Ինչպէ՛ս ուտեստեղենի գնումներ պիտի ընեմ եթէ պանքի հաշիւներս ինձի անհասանելի դարձնես:

Գնում ընելու համա՛ր նոյնիսկ շատ տխմար ես:



Բոլո՛ր կեանքս ուտեստեղենի գնումներ ըրած եմ: Ամեն օր շուկայ կ'երթայի ...

Բանէ մը լո՛ւր չունիս: Գանատայի մէջ գործերը տարբեր են:



Դուրս պիտի ելլեմ. բանալիները ինձի տո՛ւր:

Ինչո՞ւ:


Դուրս ելլելու նպատակդ ուրիշ մարդոց հետ ծանօթանալ է:

Չեմ կրնար միամիտակա ապրիլ: Ընկերներու, շրջանակ ունենալու պէտք ունիմ:




Տունը կեցի՛ր ըսի:

Չեմ կրնար միամիտակա ապրիլ: Ընկերներու, շրջանակ ունենալու պէտք ունիմ:



Ո՛հ, կ'աղաչեմ ...





Քոսէ՛ հոս եկուր, կուզեմ
հետդ պառկիլ:



Հոգնա՛ծ եմ:



Ո՞վ է ամուսինը այս տան մէջ:
Իբրեւ կին, պարտականութիւնդ
է ինձի հետ պառկիլ երբ որ
ուզեմ:



Բնա՛ւ փափաք
չունիմ:



ԸՐէ՛ ԻՆՉ ՈՐ
Կ'ԸՍԵՄ:



Մէկու մը հետ խօսելու պէտք ունիմ: Որեւէ ծանօթ չունիմ:
Չեմ կրնար հեռանալ ... բնաւ դրամ չունիմ:
Ան իմ ամուսինս է:
Եթէ ամուսինդ է, բռնաբարութիւն չի սեպուիր, չէ՞:
Եթէ ոստիկաններուն դիմեմ, ինձի երկրէն դուրս կը նետեն:





Մառային հետ
 այսպես հանդիպեցայ,
 հաշարանի մը
 բաղնիքը: Իրեն
 պատմեցի գլխես
 անցածները ու ցցուցի
 մարմնիս զանազան
 մասերու վրայի
 կապտուկները: Շատ
 զայրացաւ: Երկուքս ալ
 լացինք: Յետոյ ըսաւ՝
 «Քոսէ՛, ես քեզի
 պիտի օգնեմ:»

Այս իմ հեռաձայնի թիւ է:
 Վաղը, երբ որ գործի մեկնի,
 ինծի հեռաձայնէ: Կուգամ ու
 քեզ տունէդ կ'առնեմ:

Յաջորդ օրը

մարդը
 անհետացաւ:



Սքանչելի՛



Քեզ ներկայացնեմ տիկ.
 Մանգային: Ան ինծի շա՛տ
 օգնեց:

Քեզի՞ օգնեց: Քու ալ
 ամուսինդ քե՛զ կը
 ծեծեր:

Դրացիս միշտ ինծի կը հետեւէր
 ու իմ վրայ սեռային շիրաշահում
 կատարեց. բնիկ երկիրս՝ Ալեքերիան
 լքեցի ու այստեղ եկայ: Բոլոր
 ունեցուածքս թողեցի ու փախայ:

Սոսկալի՛ բան:






Սկսայ ընկերներու ու իրենց ընկերներուն անուշեղեններ ծախել: Ամէն օր, ամուսինս տունէն դուրս ելլելէն վերջ, ես անմիջապէս խոհանոց կը մտնէի:



Բարի՛ եկար, սիրելիս. այսօր կանուխ վերադարձար:
Քաղցր բուրմունք մը կայ ...




Ամէն երեկոյ, պահարանի մէջի հարիրաւոր անուշեղեններէն երկու կամ երեք հատը ամուսնուս տուի, որ տան մէջի քաղցր բուրմունքին մասին չի կասկածի: Շուտով բոլոր ընկերներս ինծի համար կ'աշխատէին, իմ շինած անուշեղեններս քաղաքին տարբեր թաղերուն կը բաժնէին:



Անիթա, 200 հատ քաղաքի կեդրոնը պիտի տանիս: Գարլա, առ այս 100 կտորը:



Եւ սկսայ դրամ խնայել, որ օր մը ...
Կարծեմ այդ մեծ ՕՐԸ երկուշաբթին պիտի ըլլայ:



ԱՆՍՍ
ԱՆՐՈՎ:



Միշտց մը վերջ, երբ իմ գործս բանեցնելու փորձառութիւնս ալ բաւական աւելցաւ

ՔՐՈՍԷ ԱՆՈՒՇԵՂԵՆՆԵՐ




Մամա՞
Քոսէ՛ արջիկա, ինչպէ՞ս ես:



Ամէն բան շատ յաջող կ'ընթանայ, մամա:
Քեզմով շատ հպարտ եմ, Քոսէ
Քեզի՞ շնորհիւ, մամա:

ՄԱԿԱԼԻԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Սեպտեմբերի առաւօտ մը ...


















Մարդկային ռեսուրսներու բաժնէն տեղեկութիւն պահանջեցի:
Հետազօտութիւն սկսեցուցին:

Սորվեցայ որ հեռաձայնային ու գրաւոր հաղորդակցութիւններու փաստերը
պահելը օգտակար կրնայ ըլլալ. նաեւ վկաները:

Երբ տեղեկացայ, սկսայ աւելի լաւ հասկնալ գործի միջավայրի մէջ սեռային
սաստկութեան նշանները, ինծի հասանելի ընտրանքները, կարե խօսքով
այն ինչ որ կրնամ ընել: Հիմայ յոյս ունիմ:

Մինչայդ, ընկերային շրջանակս կ'ընդլայնեմ ու ինքզինքս կը տեղեկացնեմ:
Հիմայ աւելի վարժ եմ ոտնձգութեան նշանները նշմարելու, զանոնք
հանչնալու ու անուանելու:




ՈՒՒՆՏԶՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Իմ անունն է Ռիմ ու ընկերուհիս անունն է Ամալ: Երկուքս ալ Գանատա նոր եկանք: Ամալը փախստական է, ես ալ ճարտարապետական նախագծման վրայ Մագիստրոսի ուսման հետեւելու համար ժամանեցի իբր միջազգային ուսանողուհի: Ծանօթանալէ վերջ միասին բաւական ժամանակ անցուցինք ու իրարու ամբողջովին կը վստահինք:

Անգլերէնով ինչպէ՞ս կ'ըսեն « Բադ »?

Կ'ըսեն « Duck »



Իսկապէ՞ս կարիքը ունիմ անգլերէնս ու ժեղացնելու:

Անգլերէնս առաջացնելու համար մասնաւոր դասատու բռնել կը խորհիմ: Ի՞նչ կ'ըսես:

Ամալ, այդ սքանչելի գաղափար մըն է:

Ինչպէ՞ս պիտի գտնամ մասնաւոր դասատու:

Հոս ու հոն յայտարարութիւններու տախտակներու վրայ Անգլերէնի մասնաւոր դասատուներու գովազդներ կը տեսնեմ:


Անգլերէնի մասնաւոր դասատու Անգլերէն լեզուի բարձրագոյն տիտղոսի դեկանատուն պատրաստ է մասնաւորի դասեր տալու կապուեցէ՛ք ձոնի հետ

Րի՛մա, գտայ մասնաւոր դասատու մը: Անունը ձոնն է ու Անգլերէն լեզուի բարձրագոյն տիտղոսի դեկանատուն է:

Ամալ, սա զարմանալի լավ լուր է:

Եթէ կ'ուզես, քեզի մինչեւ ժամադրութեանդ տեղը ընկերանամ, ու հետո՞ւսնիդ վրայ ալ կրնանք ապահուութեան գաղտնաբառ մը գետեղել:

Այո՛, հարկաւ: Ամէն երկուշաբթի իր գրասենեակը պիտի երթամ: Հետո՞ւսնիս վրայ ձայնը հանելի կուզայ:





Պարզապէս կ'ուզեմ
տուն հասնիլ



Մասձ
կ'երեւիս:



Լաւ եմ ...



Հանէ՞ սա վրայեղ:
Կրնաս հիւանդանալ:

Ո՛ջ



Ամբողջովին
թա՛ց է:

ՔԱՇԷ՛
ՉԵՈՒՔԻ



ՔԱՇԷ՛
ՉԵՈՒՔԻ



Ա՛՛ Լ ԿԸ ԲԱՒԻ՛՛ –
Կուզեմ դուրս
գալ:


Հա-հա ... ես կը
կենամ երբ որ դուն
հանդարտիս:




Հա-հա ... խելագա՛ր
աղջիկ:




ՏԵՍՈՒԶ




... բողոքեցի ու ըսի որ կենայ, բայց ան կը խնդար ու ես ալ կը պոռայի « կեցի՛ր, քաշէ՛ ձեռքդ »:




Ջանացէ՛ք հասկնալ, օր. Ալ-Էրիանի, ճոնը 4 տարիներէ ի վեր այստեղ օգնական դասատուի պաշտոն կը վարէ:



Նախապէս ալ իմ դասերուս հետեւեցաւ: Փայլուն ուսանող է, ու իր առջեւ ունի հոյակապ ասպարէզ:




Իմ կարծիքով թիրիմացութիւն մը պէտք է եղած ըլլայ ...




Գանատայի մշակոյթէն ու արժէքներէն անտեղեակ էք: Այր մարդոց ու կիներու միջեւ ընկերային յարաբերութիւններ սովորական են:

Բայց պարո՛ն ...



Ճոնին հետ խօսելով յարդեցէք հարցերը:



Ճոնին հետ խօսի՛ր: Ճոնին հետ խօսի՛ր: Ինչպէ՞ս կրնայ այսպէս բան մը ըսել:

Ինչո՞ւ ինծի չի հաւատար:



Իմ տունը երթանք ու խորհինք թէ ինչ կրնայ ըլլալ մեր յաջորդ քայլը:





Ի՛նչ սեռայնային, ցեղապաշտական ու Իսլամատենաց խոսքեր լսեցինք:

Ճիշդ այդպե՛ս: Կոպի՛տ մարդ:



Չափազանց դայրացած եմ:



Կա՛յ մեկը որուն հետ կը փափաքիս խօսիլ: Ցանկ մը կազմենք ու մեկուն գտնանք:



Լաւ մօտեցում է:

Կան ուսանողներու խմբաւորումներ ...




Խորհրդատուն, Բոնուլթեան ենթարկուած կիներու օգնութեան հեռախօսագիծը, տաներէցը:



Հաւատքը ինծի համար շատ կարեւոր է. կուզեմ նախ տաներէցին խօսիլ:

Հոյակապ: Վաղը կ'երթանք:

Միա՛ ու



ՏԱՆԵՐԷՑԸ



Դեպքը այսպէս զարգացաւ: Նաեւ ինծի ըսին որ թիրիմացութիւն մը պէտք է եղած ըլլայ, ու հիմայ վստահ չեմ թէ պատահածը սխալ բան մըն է՞ր թէ ոչ:



Դուն իրեն քեզ դպչելու իրաւունք տուի՛ր:

Ուրեմն պատահածը սխալ բան մըն էր:

Ո՛չ, չի տուի:





Եմ ապ



Շնորհակալ եմ, Ռիմա:



Ի՞նչ պիտի ընես, Ամալ: Պաշտոնապես բողոք պիտի ներկայացնե՞ս:

Հիմակուհիմայ միայն դուրս կելլիմ քեզի ու Քիթթային ճաշարանէն սուշի բերելու:



Երբ սուշի կ'ուտես, կեանքը այդքա՛ն աւելի լաւ կ'ընթանայ:

Օրէնքի Նախագիծ C132-ն ալ չի մոռնանք:



Պաշտոնապես բողոք պիտի ներկայացնեմ: Այդ իմ իրաւունքս է: Ճոնին ըրածը սխալ էր:



Կ'ուզեմ որ ամէն մարդ Օրէնքի Նախագիծ C132-ի մասին տեղեակ ըլլայ: Ուսանողներու Միութիւնը, Կանանց կազմակերպութիւնները ու այլ խումբերը գործին մեջ մտցնենք:



Պահանջե՛նք որ համալսարանի ուսանողները, դասատուները ու աշխատատէրները ստիպողական դասի հետեւին սեռային սաստկութեան ու համաձայնութեան մշակույթի մասին:



Յաջորդ շաբաթ

ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ԿԻՆԵՐՈՒ ԴԵՄ ՍԱՍԿՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ԿԻՆԵՐՈՒ ԴԵՄ ՍԱՍԿՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ԿԻՆԵՐՈՒ ԴԵՄ ՍԱՍԿՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋ



Մանուէլա, ինչքա՛ն ուրախ եմ քեզ տեսնելով:

Բարի՛ վերադարձ, Մանուէլա:



Շրջապատույտդ ինչպե՞ս անցաւ: Օնթարիոյի զանազան շրջանները նուագեցիր:

ՀԻԱՆԱԼԻ՛ էր:



Մքանչելի մարդոց հետ ծանօթացայ ու քանի՛ քանի տարբեր տեղեր նուագեցիր:

Իսկական ԱՍՏՂ մըն ես:




Ի՛նչ լավ է այսքան ժամանակէ վերջ քեզ կրկին տեսնել:

Բոլորս քեզ կարօտցանք, Մանուէլա:



Վաղը պրանչին կը տեսնուինք:

Շնորհակալ եմ որ եկար, Վալերիա:



Մ օ պարել կը փափաքիմ: Քիչ մը այցելեմ Ձի Լաունն:



Բարե՛ւ, դուն երգչուհի Մանուելան չե՞ս: Ես ճէքն եմ, Ձի Լաուննի տերը: Կրնա՞մ քեզ խմիչք մը հրամցնել:

Ինչու չե՛:




Քու մասիդ լսած եմ ու քեզ նախապես այստեղ տեսած ալ եմ:



Բաղնիք կ'երթամ ու շուտով կը վերադարնամ:

Ահապարանք չունինք, Մանուէլա:







մի քանի ժամ վերջ

Երեքը միասին ինծի բռնաբարեցին, ու յետոյ ինծի սենեակը մինակս ձգեցին: Երբ արթնցայ, քեզի հեռաձայնեցի:

Մանուէլա – ոստիկաններուն հեռաձայնե՞մ:



Ո՞չ – յանցանքը իմս է:

Բայց ...



Ինծի չպիտի հաւատան:

Չեմ ուզեր ինծի պատահածները կրկին պատմել:

Լաւ:



Յանցանքը իմն է, քանի որ այդ խմիչքը ընդունեցի: Նաեւ խմիչքս իր հետ ձգելով բաղնիք գացի: Յետոյ իրեն հետ պարեցի:



Սիրելիս, դուն ոչ մի սխալ բան չ'ըրիր: Քու յանցանքդ չէ: Քու խմիչքիդ մէջ դմբեցուցիչ դրին: Քեզ բռնաբարեցին: Պատահածը քրէական արարք մըն է: Քեզի դմբեցուցիչ նիւթեր տուին: Չեա կրնար համաձայնութիւնդ տալ եթէ դմբեցուցիչներու ազդեցութեան տակ ես:



Ըսին որ իմ երկսեռային ըլլալը զարտուղի կացութիւն մըն է, որ պէտք է սրբագրեն:

Պէտք է երթանք սեռային սաստկութեանց բուժման կեդրոնը:



Բարի՛ եկար մեր կեդրոնը, Մանուէլա: Իմ ամուսն է Շիվանս, եւ քեզմէ պատասխանատու հիւանդապահուհին եմ: Քեզի նեցուկ կանգնելու համար ինչ որ կարելի է պիտի ընեմ:



Եթէ կ'ուզես, կրնանք փաստեր հաւաքել, որոնք եթէ որոշես պաշտոնական ամբաստանութիւն ներկայացնել, կրնաս գործածել: Կուզե՞ս որ ընենք:



Ստիպուած չեա պաշտոնական ամբաստանութիւն ներկայացնելու: Այս կազմակերպութիւնները կրնան քեզի խորհուրդ տալ ու նեցուկ կանքնիլ: Գլխէդ անցածը խիստ ցնցիչ է:






Վերապրողներու Նեցուկի խումբի ժողովին Վալերիան ու Մանուէլան շատ կիներու հանդիպեցան, որոնցմէ ոմանք խօսեցան իրենց գլխէն անցած սեռային ոտնձգութեան, սեռային հարցակման ու բռնաբարման դէպքերու մասին: Անոնք նաեւ խօսեցան իրենց բուժման համբողջութեանց մասին, որոնց ընթացքին հասկցան որ պատահածը իրենց յանցանքը չէր, ու իրենց պատմութիւնները, ձայները ու կեանքերը արժէքաւոր են: Մանուէլան սկսաւ ժողովներուն կանոնաւոր հետեւիլ:





Կազմակերպուեցան






Ի՞նչ կը պատահի:

Սեռային սաստկություններն դեմ կը պայքարինք. մեզ միացե՛ք

ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ՍԵՌԱՑԻՆ ՍԱՍՏԿՈՒԹԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԴԵՄ

ՄՇԱԿՈՑԹ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ, ՈՉ ԹԷ ԲՈՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ



ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ԲՈՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋ ԴՐԷ՛Ք ԲՈՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ

Ո՞՞՞ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ Ո՞՞՞

Ո՞՞՞ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ Ո՞՞՞

Ո՞՞՞ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ Ո՞՞՞

Այս թռուցիկը համաձայնության մասին խօսելու համար պատրաստեցինք

Ուրախ իմ որ տեղեկացայ. այլևս այստեղ պիտի չի գամ:

Համայնքէն շատեր կանանց պայքարին նեցուկ կանգնեցան: Այսպեսով մէջտեղ եկաւ համայնքային խումբ մը, որուն նպատակն էր ուսմամբ ու հաւաքական ձեռնարկներով սեռային սաստկություններն դեմ պայքարիլ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կը յուսանք որ նկարագարող վէպի ընդգրկած պատմությունները համբայ բանան իրենց պարունակած նիւթերու մասին երկխօսութիւններու, որպէսզի փոխուին սեռային սաստկութեան հանդէպ դիրքորոշումները: Դուք ձեզ ազատ զգացէք ձեր ընկերներու, ընտանիքի ու համայնքի հետ այս հարցերու մասին խօսակցութիւններ սկսեցնելու:

ՔՈՍԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Կը տեսնենք որ պատմութեան սկզբին Քոսէն անհոգ ու ազատ պատանուհի մըն է: Ինչպէ՞ս կը փոխուի յառաջիկայ ամուսնուն հետ ծանօթանալէ յետոյ:
2. Գանատա տեղափոխուելէ յետոյ Քոսէին կեանքը ինչպէ՞ս կը փոխուի:
3. Քոսէին ամուսինը տան բանալիները իրմէ կ'առնէ: Այս շարժումը ինչո՞ւ առարկելի կամ խնդրահարոյց է:
4. Քոսէին ամուսնուն վիրավորող ու շարաշահող վարմունքին մասին խօսեցէ՛ք: Իր ըրածները Քոսէին վրայ ի՞նչ հոգեկան ազդեցութիւն կ'ունենան:
5. Քոսէին ամուսինը կը պնդէ որ անոր հետ սեռային յարաբերութիւնը, նոյնիսկ հակառակ կնոջ կամքին, իր իրաւունքն է, քանի որ ամուսնացած են: Այս մասին ի՞նչ կը խորհիք: Եթէ Քոսէին ընկերը ըլլայիք, իրեն ի՞նչ խրատ կուտայիք:
6. Քոսէն ինչպէ՞ս կը ծանօթանայ Նիշային հետ: Նիշան Քոսէին ինչպէ՞ս կ'աջակցի:
7. Երբ Քոսէն կ'երթայ Ներգաղթող Կիներու Ծառայութիւններ կազմակերպութեան, իրեն ինչպէ՞ս կ'օգնեն: Կեանքը ինչպէ՞ս կը փոխուի:
8. Իր անձնական գործը բանալը Քոսէին կեանքին վրայ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ:

ՄԱԿԱԼԻԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Գործատեղիին մէջ սեռային սաստկութեան ու ոտնձգութեան ենթարկուելէ յետոյ, Մակալին ինքզինք ի՞նչ տեսակ խոցելիութեան ու արգելքներու առջեւ կը գտնէ:
2. Ի՞նչ բան Մակալին համոզեց Տոնին դէմ շարժման անցնելու:
3. Ի՞նչ տեսակ տեղեկութիւններ Մակալին կրնային օգտակար ըլլալ ու ե՞րբ:
4. Մակալին իր ընկերներուն հետ սուրճի համար կը ժամադրուի. անոնց վերաբերումին մասին ի՞նչ կը խորհիք:
5. Պաշտոնական գանգատը ներկայացնելէ վերջ Մակալին դեռ ի՞նչ խոչընդոտներու կրնայ հանդիպիլ:
6. Ձեզ ալ պատահա՞ծ է որ գործատեղիին մէջ սեռային սաստկութեան կամ ոտնձգութեան ենթարկուիք, բայց այդ պահուն չի կարողանաք եղածը հանաչել:
7. Կը հանշնա՞ք որեւէ անձի որ վերապրած ըլլայ Մակալինին նման փորձառութենէ մը:
8. Ըստ ձեզ, ո՞րն է ամենալաւ մօտեցումը հանրութեան իրազեկութիւնը բարձրացնելու համար գործատեղիներէ ներս պատահող սեռային սաստկութեան կամ ոտնձգութեան դէպքերու հանդէպ:

ԱՄԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՒԻՒՆԸ

1. Ինչպե՞ս կը նկարագրէք Ռիմայի ու Ամալի յարաբերութիւնը:
2. Ամալը ի՞նչ տեսակ սաստկութիւններու կ'ենթարկուի:
3. Ի՞նչ ձեւերով ճոնը Ամալին մարմնային սահմանները կ'ոտնակոխէ:
4. Ռիման ինչպե՞ս կ'աջակցի Ամալին: Դուք անոր ինչպե՞ս կ'աջակցէիք:
5. Ի՞նչ կը խորհիք Տեսուչին խօսքերուն մասին թէ Ամալը « Գանատայի մշակոյթէն ու արժէքներէն » անտեղեակ է: Նոյն հակազդեցութիւնը կու տա՞ր եթէ արտաքին երեւոյթէն Ամալին մահմետական ըլլալը յայտնի չըլլար: Ինչո՞ւ Տեսուչը ճոնին կը պաշտպանէ:
6. Տաներեցը Ամալին ինչպե՞ս կը պատասխանէ:
7. Օրէնքի Նախագիծ C132-ը ի՞նչ է: Սեռային սաստկութենէ վերապրողներուն վրայ ազդեցութիւնը ի՞նչ է:
8. Ըստ ձեզ, Ռիման ու Ամալը Ուսանողներու Միութիւն երթալէ վերջ ի՞նչ կ'ընեն:

ՄԱՆՈՒԷԼԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՒԻՒՆԸ

1. Նախ Մանուէլան յարձակման համար ինքզինք պատասխանատու կը բռնէ: Ի՞նչ պատճառներ կու տայ այսպէս խորհելու համար:
2. Հասարակութեան մէջ (ընկերներէն, ընտանիքէն, մէտիաներէն, դպրոցէն, աշխատավայրէն եւլն.) ինչպիսի՞ պատգամներ կը լսենք որոնք վերապրողները կ'այսպանեն սեռային սաստկութեան համար: Ինչպիսի՞ պատգամներ կը լսենք որոնք վերապրողներուն կ'աջակցին:
3. Վալերիան Մանուէլային կը խօսի համաձայնութեան մասին: Համաձայնութեան գաղափարէն դուք ինչպե՞ս տեղեկացաք: Համաձայնութեան իմաստին մասին ի՞նչ պէտք է դասաւանդուի ու ինչո՞ւ:
4. Վալերիան Մանուէլային ինչպե՞ս կ'աջակցի: Դուք եթէ Մանուէլային ընկերը ըլլայիք, անոր ինչպե՞ս կ'աջակցէիք:
5. Որո՞նք են ազդակները, որոնք սեռային սաստկութիւնը կը զանազանեն այլ քրէական արարքներէն: Օրինակի համար, եթէ Մանուէլային ինքնաշարժին ապակիները կոտրուին, հաւանաբար ինքզինք պիտի չ'այսպանէ: Ի՞նչ է պատճառը որ սեռային սաստկութիւնը հասկնալը կամ անոր մասին բան մը ընելը աւելի դժուար է:
6. Պատմութիւնը Մանուէլային երկսեռային ըլլալուն ու բռնարարներուն այս կացութիւնը « սրբագրելու » փորձին կը վերաբերի: Ի՞նչ կը հասկնաք այս միջադէպէն:
7. Մանուէլան նման սեռային սաստկութեան դէպքերէ տուժած անձերու խումբէն աջակցութիւն կը ստանայ: Ինչո՞ւ համար յատկապէս այսպիսի աջակցութիւնը կարեւոր է:
8. Կրնա՞ք յիշել ձեր համայնքէն դրուաքներ՝ սեռային սաստկութենէ վերապրողներու տրուած աջակցութեան մասին: Ինչպիսի՞ քաջեր պէտք է առնուին երաշխաւորելու համար որ սեռային սաստկութեան վերապրողներուն ընկերային կամ համայնքային աջակցութիւն տրուի:

Եթէ աջակցութեան կարիք ունեք, կապուեցէ՛ք մեզի հետ՝




Բռնութենէ
տուժող կիներու
խորհրդակցութեան
հեռախօսագիծը
(Assaulted Women's
Helpline)

24 ժամ | շաբաթը 7 օր | 200 լեզուներ |
Գաղտնապահութիւն | Անանուն խորհրդակցութիւն
Հեռախօսագիծը Օնթարիո նահանգի բոլոր
կիներուն ձրիաբար կը մատակարարէ հզնաժամային
խորհրդակցութիւն, զգացմունքային աջակցութիւն,
ապահովութեան ծրագրավորում, տեղեկութեան ու
յանձնարարութեան ծառայութիւններ: Եթէ դուք կամ ձեզ
ծանօթ մի կին չարաշահման կ'ենթարկուիք, անմիջապէս
հեռաձայնեցէ՛ք մեզի:
GTA: 416-863-0511
Toll Free: 1-866-863-0511
Անվճար թիւ 1-866-863-7868
www.awhl.org

Si vous avez besoin de soutien, contactez:



Fem'aide
Ligne d'écoute et de soutien pour les femmes
d'expression française dans la province de l'Ontario.
Disponible 24 heures par jour, 7 jours par semaine.
Vivre sans violence est un droit !
Appelez dès maintenant :
1-877-336-2433
ATS 1-866-860
www.femaide.ca



**Ontario Council of Agencies
Serving Immigrants**
110 Eglinton Avenue West, Suite 200
Toronto, Ontario M4R 1A3
vaw@ocasi.org
www.ocasi.org
facebook.com/ocasiconnects

**Mouvement Ontarien des Femmes
Immigrantes Francophones**
P.O Box 40036, RPO, Queens Quay
Toronto, Ontario M5V 0A4
contact@moff.ca
www.moff.ca
Facebook.com/moff

